

ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ ԻՐ «ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ»Ը

(Բանախօսություն Պ. ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆԻ)

Տիկիներ եւ պարոններ,

Խորին եւ անկեղծ հաճոյքն ունիմ ձեզ ներկայացնելու այսօր երիտասարդ բանաստեղծ մը իր արուեստին մէջ այնքան գունագեղ ու այնքա՛ն հզօր, իր յղացման մէջ այնքա՛ն խիզախ որքան ազնուական եւ իր զգացմանց մէջ իրապէս ազգային, բանաստեղծ մը որ այնքա՛ն շեշտ ինքնատիպ անհատականութիւն մըն է որքան իր *ցեղին սրտին* կատարեալ մէկ ցոլացումը:

Դանիէլ Վարուժանի բանաստեղծական կարողութեանց մեծագոյն մասը ըմբռնինաժ էինք արդէն, ազատութեան առաջին օրերուն, իր քերթուածներու ստուար մէկ հաւաքածոյին մէջ զոր իրաւամբ ինքը կոչած է *Յեղին սիրտը*: Ու հաճոյքով ճաշակած էինք հոն իր այնքան գեղեցիկ, խանդաղատալիւ ու հզօր քերթուածները որ կը կոչուին *Նեմեսիս, Թիապարտները, Կարոտի նամակ, Պատուեր, Հայրենի լեռներ, Դիցազնի մը սուրին, Յաղթողը, Հովիւր*, յիշելու համար ուրիշներ: *Յեղին սիրտը* հայ հոգիին կարկառուն յաւիտենական գիծերուն եւ գաւառին մշտառոյգ մշտածիծաղ բնութեան փառաբանութիւնն է՝ մխացող աւերակներուն ծուխին մէջէն աղաղակուած, մկանունքին պաշտամունքը՝ տառապանքին մէջէն հայցուած, ջիղին շեշտը՝ հալածանքին մէջէն լուսագծուած: Անիկա մէկ ծայրէն միւսը՝ բնապաշտ խորարմատ ձգտում մը ունի, վարդագոյն յաւիտենական ուժին վճիտ առաքինութիւնը ազգի մը մէջ մասնաւորելու համար, չարչարուած, բայց հուսկ ուրեմն յաղթահարող Գեղեցկին կայծակնաշող տեսանողութեամբ, եւ տառապանքին ու արցունքին մէջ անգամ ազնականօրէն հպարտ երեւնալու համար: